ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS[4]	NKJV	NRSV	TEV	NJB
Քրիստոսով Նոր կյանքը	Քրիստոս և ոչ թե փորձանք	Ճշմարիտ Քրիստոնեական կյանքը	Քրիստոսի հետ մեռնելն ու ապրելը	Կենսատու միություն փառավորված Քրիստոսի հետ
(2:20-3:4)			(2:20-3:4)	
				3:1-4
	3:1-11	3:1-4	Հին Կյանքը և Նորը	
				Քրիստոնեական վարքի ընդհանուր կանոններ
				3:5-11
3:5-11		3:5-11	3:5-7	
			3:8-11	
	Նոր Մարդու բնավորությունը			
				3:12-17
3:12-17	3:12-17	3:12-17	3:12-17	
				3:16-17
Նոր Կյանքի սոցիալական պարտավորությունները	Քրիստոնեական ընտանիքը	Քրիստոնյայի պարտավորությունները	Նոր Կյանքում միջանձնային հարաբերությունները	Ընտանիքի և տան բարոյականությունը
(3:22-4:1)		(3:18-4:6)		
3:18-19	3:18-4:1	3:18-19	3:18	3:18-21
			3:19	
3:20-21		3:20-4:1	3:20	
			3:21	
3:22-4:1			3:22-4:1	3:22-4:1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Կող. 3:1-4-ը Քրիստոնեական էթիկայի և ապրելակերպի աստվածաբանական հիմքն է: Հավատացյալները պետք է ապրեն այն նոր կյանքը, որն ունեն Քրիստոսի մեջ: Նրանք Քրիստոսի հետ միասին թաղվել և միասին էլ հարություն են առել (տես՝ Կող. 2:12-13; Հռոմ. 6:3-11): Նրա կյանքը հոսում է նրանց միջով:

Բ. Պողոսը թվարկում է այն բաները, որոնցից պետք է ազատվել (մի կողմ դնել, Կող. 3:8-9) և ներառել (հագնել, Կող. 3:10) այն, ինչ ձևավորում է հավասարակշռված հանդիմանություն բարեպաշտությանը: Պողոսը հաճախ էր թվարկում մեղքերի (տես՝ 1 Կորնթ. 6:9-10, Գաղ. 5:19-21, Եփես. 5:3-5) և առաքինությունների (տես՝ Գաղ. 5:22-23, Եփես. 5:18-20, Փիլ. 1:4-7, 1 Թեսաղ. 5:12-22) ցանկեր: Շատ տարբեր կերպերով այս ցանկերը զուգահեռվում են Պողոսի օրերում ապրող հույն բարոյախոսների հետ: Սակայն շարժառիթը և մեխանիզմը Քրիստոսն էր՝ Հոգին, ոչ թե անձի ջանքերը: Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 3:5-ում:

Գ. Պողոսի միաբանության հզոր կոչը Երրորդության միաբանության շնորհիվ, որը շատ գեղեցիկ կերպով արձանագրված է Եփես. 4:1-10-ում, զուգահեռվում է Կող. 3:12-17-ում: Նաև Պողոսի հզոր պահանջը յուրաքանչյուր հավատացյալից, որպեսզի լցվեն Սուրբ Հոգով (տես՝ Եփես. 5:18) զուգահեռվում է Կող. 3:16-ում: Այս զուգահեռները բառային չեն, այլ կառուցվածքային: Հիշե՛ք, որ Կողոսացիներին և Եփեսացիներին ուղղված թղթերը հիմնված են գրեթե ամբողջությամբ նույն կառուցվածքի՝ կմախքի վրա:

Դ. Պողոսի հորդորները ընտանիքներին (Կող. 3:18-4:1) ցույց են տալիս, թե ինչպես պետք է հավատացյալների նոր կյանքը Քրիստոսում ազդի իրենց կյանքի յուրաքանչյուր բնագավառի վրա: Աստվածաշնչյան հավատքը արմատական բաժանում է մարդու հին բնությունից (ընկած էությունից): Փոփոխության այս վկայությունն այն է, որ մենք այլևս չենք ապրում մեր անձերի համար, այլ ուրիշների (տես՝ 1 Հովհ. 3:16): Սա ընդօրինակում է Հիսուսի կյանքը: Այս ամբողջությամբ նոր կողմնորոշումը վկայություն է՝ ապացույց, որ մենք փրկվել ենք:

Գլուխ 3-ը (3:18-4:1) մի ամբողջական համատեքստ է (տես՝ Եփես. 5:22-6:9):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3:1-4 (Ամբողջական պարբերության բաժանումը ներառում է 2:20-3:4)

…3:1/Ուստի/ Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն վերին բանե՛րը փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում: 2Վերի՛ն բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա է: 3Որովհետև դուք մեռաք, և ձեր կյանքը պահված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ: 4Երբ Քրիստոսը, Որ մեր կյանքն է, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ փառքով պիտի հայտնվեք:

3:1 «Ուստի» Այս խոսքը վարդապետական բաժինը (այսինքն՝ 1-2 գլուխները) կապում է գործնական բաժնի հետ (այսինքն՝ 3-4 գլուխները): Պողոսի թղթերում սա համարվում է ստանդարտ գրական ձև (տես՝ Հռոմ. 12:1, Եփես. 4:1, Փիլ. 4:1):

❖ **«եթե»** Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է, որ ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Հավատացյալները Քրիստոսի հետ միասին հարություն են առել:

❖ **«Քրիստոսի հետ հարություն եք առել»** Սա *syn* բաղադրյալ էր՝ «միասին հարություն առած» (տես՝ Կող.3:12,13, Հռոմ.6:3-11, Եփես.2:5-6): Հավատացյալներն ունեն հարուցյալ կյանք հիմա, ուրեմն պետք է այդպիսի կյանքով էլ ապրեն: 1-4 համարները հանդիսանում են Քրիստոնեական ապրելակերպի համար աստվածաբանական հիմք:

❖ **«վերին բանե՛րը /անգլ՝ շարունակեք/ փնտրեցեք»** Սա կա՛մ ներկա ժամանակի ներգործական սեռի սահմանական եղանակ է, կա՛մ էլ ներկա ներգործական հրամայական: Հետևաբար, սա հորդոր է հետամուտ լինելու հոգևոր մտքերին և բաներին (տես՝ Կող.3:2, Փիլ.2:1-2, 4:8):

1 և 2 համարները զուգահեռներ են: Հավանաբար երկուսն էլ ներկա ներգործական հրամայականներ են: Հավատացյալները դառնում են այն, ինչի մասին մտածում են: Աչքերն ու ականջները հոգու պատուհաններն են:

Որոշ գիտնականներ կարծում են, որ այս համատեքստը հակադրություն է Քրիստոսի մեջ մեր էության (սահմանական) և Քրիստոսի մեջ ինչպիսին պետք է լինենքի (հրամայական) միջև: Պողոսը իրականում հաճախ է կիրառում նմանատիպ քերականական մոտեցում:

❖ **«որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում»** Սա մարդաբանական՝ անտրոպոմորֆիկ արտահայտություն է (Սաղմ.110:1), որը Պողոսը հազվադեպ է կիրառում, Քրիստոսի իշխանության և պատվավոր տեղի համար (Ղուկաս 22:69, Գործք 7:55, Հռոմ.8:34, Եփես.1:20, Եբր.1:3, 8:1, 10:12, 12:2, 1 Պետ.3:22): Պողոսը նկարագրելով Քրիստոսին Հոր աջ կողմում նստած նաև ներկայացնում է սուրբերի համար Նրա շարունակական բարեխոսական ծառայությունը (տես՝ Հռոմ.8:34, Եբր. 7:25, 9:24, 1 Հովհ.2:1): Սա փոխաբերություն է միջին արևելյան թագավորի գահանիստ վայրի համար: Հուսով եմ, որ երբ հասնեք երկինք, չեք ակնկալում տեսնել «մի ծերունու, և մի երիտասարդի, որը նստել է նրա աջ կողմում՝ մեծ գահի վրա և մի աղավնի էլ սավառում է նրանց շուրջ բոլորը»: Աստվածաշունչը կիրառում է մարդկային, ֆիզիկական տերմիններ, որպեսզի նկարագրի հավիտենական, հոգևոր, սուրբ Աստծուն: Բոլոր նրան նկարագրող տերմինները փոխաբերություններ են, նմանություններ, կամ բացասումներ՝ ժխտումներ. դրանք ճիշտ են, սակայն ոչ սպառիչ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ՄԱՐԴԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ)
SPECIAL TOPIC: GOD DESCRIBED AS HUMAN (ANTHROPOMORPHISM)

I. Այսպիսի լեզուն (այսինքն՝ մարդուն առնչվող՝ մարդկային տերմիններով Աստծո բնութագրությունը) շատ տարածված է ՀԿ-ում (մի քանի օրինակներ)
   Ա. Ֆիզիզկական մարմնի մասեր
      1. Աչքեր – Ծննդ.1:4,31; 6:8; Ելից 33:17; Թվոց 14:14; 2 Օր.11:12; Զաք.4:10
      2. Ձեռքեր – Ելից 15:17; Թվոց 11:23; 2 Օր.2:15
      3. Բազուկ – Ելից 6:6; 15:16; 2 Օր.4:34; 5:15
      4. Ականջներ – Թվոց 11:18; 1 Թագ.8:21; 4 Թագ.19:16; Սաղմ.5:1; 10:17; 18:6
      5. Դեմք – Ելից 33:11; Ղևտ.20:3,5,6; Թվոց 6:25; 12:8; 2 Օր.31:17; 32:20
      6. Մատներ – Ելից 8:19; 31:18; 2 Օր.9:10; Սաղմ.8:3
      7. Ձայն – Ծննդ.3:9,11,13; Ելից 15:26; 19:19; 2 Օր.26:17; 27:10
      8. Ոտքեր – Ելից24:10; Եզեկ.43:7
      9. Մարդկային կառուցվածք – Ելից 24:9-11; Սաղմոս 47; Ես.6:1; Եզեկ.1:26
      10. Տիրոջ հրեշտակը – Ծննդ.16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ելից 3:4,13-21; 14:19; Դատ.2:1; 6:22-23; 13:3-22
   Բ. Ֆիզիկական գործողություններ (տե՛ս օրինակներ)

1. Ստեղծագործության մեխանիզմի վերաբերյալ խոսելը – Ծնն. 1:3,6,9,11,14,20, 24,26
2. Քայլելը (այսինքն՝ քայլելու ձայնը) – Ծնն. 3:8; Ղևտ. 26:12; 2 Օր. 23:14; Ամբ. 23:14
3. Նոյի տապանի դուռը փակելը – Ծնն. 7:16
4. Զոհերը հոտոտելը – Ծնն. 8:21; Ղևտ. 26:31; Ամովս 5:21
5. Իջնելը – Ծնն. 11:5; 18:21; Ելից 3:8; 19:11,18,20
6. Մովսեսին թաղելը – 2 Օր. 34:6

Գ. Մարդկային զգացմունքներ (մի քանի օրինակներ)

1. Զղջում՝ ափսոսանք – Ծնն. 6:6,7; Ելից 32:14; Դատ. 2:18; 1 Թագ. 15:29,35; Ամովս 7:3,6
2. Բարկություն – Ելից 4:14; 15:7; Թվոց 11:10; 12:9; 22:22; 25:3,4; 32:10,13,14; 2 Օր. 6:15; 7:4; 29:20
3. Խանդը՝ նախանձախնդրությունը – Ելից 20:5; 34:14; 2 Օր. 4:24; 5:9; 6:15; 32:16,21; Հեսու 24:19
4. Զզվելը՝ նողկալը – Ղևտ. 20:23; 26:30; 2 Օր. 32:19

Դ. Ընտանեկան տերմիններ (մի քանի օրինակներ)

1. Հայր
   - ա. Իսրայելի – Ելից 4:22; 2 Օր. 14:1; Եսայի 1:2; 63:16; 64:8; Երեմ. 31:9; Ովս. 11:1
   - բ. թագավորի – 2 Թագ. 7:11-16; Սաղմ. 2:7
   - գ. հայրական արարքների փոխաբերություններ – 2 Օր. 1:31; 8:5; 32:6-14; Սաղմ. 27:10; Առակ. 3:12; Երեմ. 3:4,22; 31:20; Ովս. 11:1-4; Մաղ. 3:17
2. Ծնող՝ Ովս. 11:1-4
3. Մայր՝ Ես. 49:15; 66:9-13 (կերակրող մոր նմանությունը)
4. Երիտասարդ հավատարիմ սիրեցյալ՝ Ովսեա 1-3

II. Այսպիսի լեզվի կիրառության պատճառները

Ա. Աստծուն անհրաժեշտ է, որ Իրեն հայտնի մարդկանց: Չկա մեկ ուրիշ բառապաշար, այլ միայն այս մեղավոր, աշխարհիկ բառապաշարը: Աստծո մասին ամենատարածված հասկացությունը որպես արական սեռի ներկայացուցիչ մարդաստվածության՝ անտրոպոմորֆիզմի օրինակներից մեկն է, քանի որ Աստված հոգի է:

Բ. Աստված վերցնում է մարդկային կյանքի ամենանշանակալի ոլորտները և դրանք կիրառում Իրեն հայտնելու ընկած՝ մեղավոր մարդկությանը (հայր, մայր, ծնող, սիրեցյալ):

Գ. Չնայած որ ժամանակ առ ժամանակ սա անհրաժեշտություն է (այսինքն՝ Ծնն. 3:8), սակայն Աստված չի ուզում սահմանափակվել որևէ ֆիզիկական ձևի՝ կազմվածքի մեջ (տես՝ Ելից 20; 2 Օրինաց 5):

Դ. Ամենամեծ մարդաստվածության օրինակը եղավ Հիսուսի մարմնացումը: Աստված ֆիզիկական, շոշափելի մարմին առավ (տես՝ 1 Հովհ. 1:1-3): Աստծո պատգամը դարձավ Աստծո Խոսքը (տես՝ Հովհ. 1:1-18):

III. Համառոտ հետաքրքիր քննարկման համար կարդացեք Գ. Բ. Կայերդի, *Աստվածաշնչի լեզուն և Պատկերները*, գլուխ 10, «Մարդաստվածություն», (G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*, chapter 10, "Anthropomorphism,") Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարանում /The International Standard Bible Encyclopaedia/, էջ՝ 152-154:

3:2 «Վերի՛ն բաների մասին մտածեցե՛ք» Սա համազոր է Կող.3:1-ին և հանդիսանում է կա՛մ ներկա ներգործական հրամայական, կա՛մ էլ ներկա ներգործական սահմանական: Ավելի հավանական է, որ այն հրամայական եղանակի նախադասություն է: Քրիստոնեությունը թե՛ գիտություն է և թե՛ գործողություն (տես՝ 1 Պետ.1:13-21): Այս համարը համազոր է Կող.3:1-ին:

❖ **«և ո՛չ թե այն, որ երկրի վրա է»** Այս արտահայտությունը սահմանում է Պողոսի կողմից նպատակադրված հակադրությունը՝ հավատացյալները պետք է մտածեն ու ապրեն Հոգու մեջ, ոչ թե մարմնի (տես՝ Հռոմ.8:1-17): Նրանք ընտրություն ունեն և պետք է իրենց ապրելակերպի մեջ առաջնայնություններ կարգեն: Փրկվելը դեռ ինքնաբերաբար չի հանգեցնում աստվածահաճո կյանքի, սակայն պետք է այդպես լինի:

Պողոսը կիրառում է երկակի հակադրություն, սակայն ոչ թե հոգին ընդդեմ մատերիայի, ինչպես անում են գնոստիկները, այլ նրա հակադրությունը այս աշխարհը (սերունդը) ընդդեմ Աստծո Թագավորության (նոր սերնդի): Հավատացյալները այս երկու թագավորությունների քաղաքացիներ են: Այս գիտությունը (աշխարհայացքը) հույս, համարձակություն և խաղաղություն է տալիս կյանքի փորձությունների մեջ (սուտ ուսմունքներ, չարչարանք, բանտարկություն, հալածանք, և այլն):

3:3 «դուք մեռաք» Սա մեկ այլ փոխաբերություն է՝ հիմնված մկրտության վրա, որպեսզի նկարագրի հավատացյալների նոր դիրքը Քրիստոսում (տես՝ Հռոմ.6:1-11, Կող.2:11-12): Հավատացյալները մեռած են մեղքի համար և կենդանի՝ Աստծո համար: Նրանց հորդորվում է ճանաչել իրենց նոր դիրքը Քրիստոսում (տես՝ Կող.3:5, Եփես.2:5-6) և ընդօրինակել Նրան (տես՝ 2 Կորնթ.5:14-15, Գաղ. 2:20, Եփես.5:1-2, 1 Հովհ.3:16):

❖ **«պահված է»** Սա վաղակատար կրավորական սահմանական է: Հավատացյալները մահացել են (Քրիստոսում) և եղել են ու շարունակում են մնալ պահված Աստծո մեջ: Հունա-հռոմեական ժամանակաշրջանում Առեղծվածային կրոնները կիրառում էին այս բառը նկատի ունենալով նախաձեռնության ծեսերը: Թաքուն պահված լինելու այս հասկացությունը կարող է առնչվել (1) պաշտպանությանը, կամ (2) Քրիստոսի հետ հավատացյալների փառքի լիարժեք բաժնեկցումը, որը դեռևս տեսանելի չէ այս աշխարհի համար (տես՝ Կող.3:4):

3:4 «Քրիստոսը, Որ մեր կյանքն է» Սա արտացոլում է «փոխանակված կյանքի» աստվածաբանական գաղափարը (տես՝ Գաղ.2:20, Փիլ.1:21):

❖ **«հայտնվի»** Սա վերաբերում է Երկրորդ Գալստյանը (տես՝ 1 Հովհ.3:2):

❖ **«այն ժամանակ դուք էլ Նրա հետ փառքով պիտի հայտնվեք»** Հավատացյալները մահացել են Քրիստոսի հետ, հարություն առել Քրիստոսի հետ, և մասնակից են լինելու Նրա փառավոր վերադարձին (տես՝ 1 Թեսաղ.4:13-18): «Պահվածը» (Կող.3:30) հայտնվելու է (Կող.3:4): Տե՛ս Եփես.1:6-ում ներկայացված «փառք» գրառումը և ստորև տրված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՆԿ-ՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ
SPECIAL TOPIC: NT TERMS FOR CHRIST'S RETURN

Էսկատոլոգիական շեշտադրությունն այն հատուկ օրվա վրա, երբ մարդիկ կհանդիպեն Հիսուսին (որպես իրենց Փրկչի և Դատավորի) հանդես է գալիս մի քանի նշանակությամբ՝

1. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրը» (տես՝ 1 Կորնթ.1:8)
2. «Տիրոջ օրը» (տես՝ 1 Կորնթ.5:5, 1 Թեսաղ.5:2, 2 Թեսաղ.2:2)
3. «Տեր Հիսուսի օրը» (տես՝ 2 Կորնթ.1:14, MS ℵ տալիս է 1 Կորնթ.5:5-ում)
4. «Հիսուս Քրիստոսի օրը» (տես՝ Փիլ.1:6)
5. «Քրիստոսի օրը» (տես՝ Փիլ.1:10, 2:16)
6. «Նրա օրը (Մարդու Որդու)» (տես՝ Ղուկ.17:24)

7. «այն օրը, երբ Մարդու Որդին կհայտնվի» (տես՝ Ղուկ. 17:30)
8. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությունը» (տես՝ 1 Կորնթ. 1:7)
9. «երբ Տեր Հիսուսը կհայտնվի երկնքից» (տես՝ 2 Թեսաղ. 1:7)
10. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի առջև՝ Նրա գալստյան ժամանակ» (տես՝ 1 Թեսաղ. 2:19)

Գոյություն ունի առնվազն չորս տարբեր կերպ, որով ՆԿ-յան հեղինակները անդրադառնում են Հիսուսի վերադարձին՝

1. *epiphaneia,* որը վերաբերում է պսպղուն պայծառությանը, որը աստվածաբանորեն (չնայած ոչ ստուգաբանորեն) կապ ունի «փառքի» հետ: 2 Տիմոթեոս 1:10, Տիտոս 2:11 և 3:4-ում այն վերաբերում է Հիսուսի առաջին գալստյանը (այսինքն՝ մարմնավորմանը) և Նրա Երկրորդ գալստյանը: Այն կիրառվում է 2 Թեսաղ. 2:8-ում, որը բովանդակում է բոլոր երեք կարևոր տերմինները, որոնք կիրառվում են Երկրորդ Գալստյան համար՝ 1 Տիմ. 6:14, 2 Տիմ. 4:1,8, Տիտոս 2:13:
2. *Parousia,* որը ենթադրում է ներկայություն և սկզբնապես վերաբերում էր արքայական այցելությանը: Այն համարվում է ամենաշատ օգտագործվող տերմինը (տես՝ Մատթ. 24:3,27,37,39, 1 Կորնթ. 15:23, 1 Թեսաղ. 2:19, 3:13, 4:15, 5:23, 2 Թեսաղ. 2:1,8, Հակ. 5:7,8, 2 Պետ. 1:16, 3:4,12, 1 Հովհ. 2:28):
3. *apokalupsis* (կամ *apocalypsis*), որը նշանակում է հայտնելու համար բացել՝ քողազերծել: Այն ՆԿ-ի վերջին գրքի անունն է (տես՝ Ղուկ. 17:30, 1 Կորնթ. 1:7, 2 Թեսաղ. 1:7, 1 Պետ. 1:7, 4:13):
4. *phaneroō,* որը նշանակում է լույսի մեջ բերել կամ հստակ հայտնել, բացահայտել: Այս տերմինը շատ հաճախ կիրառվում է ՆԿ-ում Աստծո հայտնության տարբեր կողմերի առանձնահատկությունների համար: Այն ինչպես *epiphaneia* կարող է վերաբերել Քրիստոսի առաջին գալստյանը (տես՝ 1 Պետ. 1:20, 1 Հովհ. 1:2, 3:5,8, 4:9) և Նրա Երկրորդ Գալստյանը (տես՝ Մատթ. 24:30, Կող. 3:4, 1 Պետ. 5:4, 1 Հովհ. 2:28, 3:2):
5. «Գալուստ»-ի համար ամենատարածված տերմինը՝ *erchomai,* նաև երբեմն կիրառվում է Քրիստոսի վերադարձի համար (տես՝ Մատթ. 16:27-28, 23:39, 24:30, 25:31, Գործք 1:10-11, 1 Կորնթ. 11:26, Հայտն. 1:7,8):
6. Այն նաև կիրառվում է «Տիրոջ օրը» արտահայտության հետ (տես՝ 1 Թեսաղ. 5:2), որը ՀԿ-յան անուն է՝ տիտղոս, Աստծո օրհնության օրվա (հարության) և դատաստանի օրվա համար:

   ՆԿ-ը որպես մի ամբողջություն գրվել է ՀԿ-ի աշխարհայացքի ներսում, որը հաստատում էր՝

   ա. ներկայիս չար ու ապստամբ դարաշրջանը

   բ. արդարության գալիք նոր դարաշրջանը

   գ. մի դարաշրջան, որը ծնունդ է առնելու Հոգու գործողությամբ՝ Մեսիայի (Օծյալի) գործի միջոցով

Զարգացող՝ կատարելագործվող հայտնության աստվածաբանական ենթադրությունը անհրաժեշտություն է, քանի որ ՆԿ-յան հեղինակները մի փոքր փոփոխում են Իսրայելի ակնկալիքը: Ռազմական, ազգայնական (Իսրայելի) Մեսիայի գալստյան փոխարեն, գոյություն ունի երկու գալուստ: Առաջին գալուստը աստվածության մարմնացումն է Հիսուս Նազովրեցու ծնունդով: Նա եկավ որպես ոչ ռազմական, ոչ իրավաբանական Եսայի 53-ի «չարչարվող ծառան», ինչպես նաև Զաքարիա 9:9-ի ավանակի վրայի հեզ հեծյալը (ոչ թե պատերազմական նժույգով կամ արքայական ջորիով): Առաջին գալուստը հանդիսավոր կերպով բացեց Նոր Մեսիական Դարաշրջանը՝ Աստծո Թագավորությունը երկրի վրա (տես՝ Հատուկ Թեմա. Աստծո Թագավորությունը): Ինչ-որ իմաստով Թագավորությունը այստեղ է, սակայն իհարկե, մեկ այլ իմաստով, այն դեռ շատ հեռու է: Մեսիայի (տես՝ Հատուկ Թեմա. Մեսիա) երկու գալուստների միջև եղած այս լարվածությունն է պատճառը, որ ինչ-որ տեղ հրեական երկու ժամանակաշրջաններն իրար են բախվում (տես՝ Հատուկ Թեմա. Այս և գալիք դարաշրջանները), որոնք ՀԿ-ից անտեսանելի են, կամ էլ առնվազն անհայտ: Իրականում, այս երկու գալուստները շեշտադրում են ՅԱՀՎԵի ամբողջ

մարդկության փրկելու Իր ջանքը (տես՝ Ծնն.3:15, 12:3, Ելից 19:5 և մարգարեների, հատկապես Եսայու և Հովնանի քարոզները):

Եկեղեցին չի սպասում ՀԿ-ի մարգարեության իրականացմանը, քանի որ մարգարեություններից շատերը վերաբերում են առաջին գալստանը (տես՝ *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ նշանակությամբ*, էջ՝ 165-166): Հավատացյալներն իրականում սպասում են Թագավորների Թագավորի և Տերերի Տիրոջ երկրորդ փառավոր գալստյանը՝ երկրի վրա ինչպես որ երկնքում է արդարության նոր դարաշրջանի սպասված պատմական իրադարձությանը (տես՝ Մատթ.6:10): ՀԿ-յան ներկայացումները ճշմարիտ էին, սակայն անկատար: Նա գալու է նորից, ճիշտ ինչպես մարգարեներն են կանխասել՝ ՅԱՀՎԵԻ զորությամբ և իշխանությամբ:

Երկրորդ Գալուստը աստվածաշնչյան տերմին չէ, սակայն գաղափարը ամբողջ ՆԿ-ի աշխարհայացքն է: Աստված ամեն բան շտկելու է: Աստծո և Իր պատկերով ստեղծված մարդկության միջև փոխհարաբերությունը վերականգնվելու է: Չարը դատվելու է և հեռացվելու: Աստծո նպատակը չի կարող և չի ձախողվելու:

Վաղ եկեղեցին երկրպագում էր Աստծուն թե՛ շաբաթ օրը և թե շաբաթվա առաջին օրը (այսինքն՝ Կիրակի՝ հարության օրը): Ժողովարանը դիմում էր զարգացող՝ աճող Քրիստոնեական շարժմանը պահանջելով անդամներից, որ չընդունեն Հիսուսին որպես Մեսիա (այսինքն՝ Տասնութ Օրհնությունները): Այդ ժամանակից ի վեր (այսինքն՝ մ.թ.70թ-ից) Քրիստոնյաները սկսեցին հավաքվել բացառապես Կիրակի օրերին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3:5-11

**5 Ուստի սպանեցե՛ք ձեր երկրավոր անդամները՝ պոռնկությունը, պղծությունը, անսանձ կիրքը, չար ցանկությունը և ագահությունը, որ կռապաշտություն է. 6որոնց պատճառով
Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա, 7որոնց մեջ մմի ժամանակ դուք էլ էիք քայլում, երբ ապրում էիք դրանց մեջ: 8Բայց հիմա դո՛ւք էլ դեն նետեցեք այդ
ամենը՝ բարկություն, ցասում, չարություն, հայհոյություն, կեղտոտ խոսակցություններ ձեր
բերանից: 9Մի՛ ստեք միմյանց, քանի որ ձեր վրայից հանել եք հին մարդուն իր գործերով. 10և
հագե՛ք նոր մարդուն, որ նորոգված է գիտությամբ՝ ըստ իր Արարչի պատկերի. 11Ուր ո՛չ հույն
կա և ո՛չ էլ հրեա, ո՛չ թլփատություն, ո՛չ անթլփատություն, չկա բարբարոս, սկյութացի,
ծառա կամ ազատ, այլ Քրիստոսն ամեն ինչ է, ամեն բանի մեջ:**

3:5

NASB	**«ձեր երկրավոր մարմնի անդամները մեռած համարեցեք»**
NKJV	**«երկրի վրա ձեր մարմնի անդամները սպանեք»**
NRSV	**«սպանեք այն ինչ ձեր մեջ երկրավոր է»**
TEV	**«պետք է սպանեք ձեր մեջ գործող երկրավոր ցանկությունները»**
NJB	**«պետք է սպանեք ձեր մեջ այն ամենը, ինչ երկրավոր է»**

Սա անորոշ կատարյալ ներգործական հրամայական է, որն արտահայտում է հրատապություն (տես Կող.3:8,12): Այն սկսում է մի նոր բաժին, որը շեշտադրում է հավատացյալների համար չարից մեկընդմիշտ ձերբազատվելու՝ ձեռք քաշելու անհրաժեշտությունը (տես՝ Կող.3:5-11): Պողոսը հաճախ էր կիրառում հագուստը որպես հոգևոր կյանքի համար փոխաբերություն (տես՝ Հռոմ.6:6,11; 8:13; Եփես.4:22,24,25,31, հավանաբար Զաքարիա 3-րդ գլխից): Հավատացյալները պետք է մեռնեն իրենց անձի, մեղքի և աշխարհիկության համար: Հաջորդ բաժինը շեշտադրում է, որ Քրիստոնյաները պետք է հագնեն Քրիստոսակերպ առաքինություններ (Կող.3:10-17):

Պողոսը հաճախ է հին կյանքի և հին մարդու մեղքերը առանձնացնում ցանկերով, որոնք շատ առումներով նման էին իր օրերի հունական բարոյախոսներին (ինչպես օրինակ Ստոիկները):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՏՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԿ-ՈՒՄ
SPECIAL TOPIC: VICES AND VIRTUES IN THE NT

ՆԿ-ում թե՛ արատների և թե՛ առաքինությունների ցանկերը տարածված են: Հաճախ դրանք արտացոլում են ռաբբիական և մշակութային (հելլենական) ցանկերը: Հակադարձ բևեռներով այս ՆԿ-յան հատկանիշները այսպիսի տեսք ունեն՝

	Արատները	**Առաքինությունները**
1. Պողոս	Հռոմ. 1:28-32	---
	Հռոմ.13:13	Հռոմ.12:9-21
	1 Կորնթ.5:9-11	---
	1 Կորնթ.6:10	1 Կորնթ.6:6-9
	2 Կորնթ.12:20	2 Կորնթ.6:4-10
	Գաղ.5:19-21	Գաղ.5:22-23
	Եփես.4:25-32	---
	Եփես.5:3-5	---
	---	Փիլ.4:8-9
	Կող.3:5,8	Կող. 3:12-14
	1 Տիմ.1:9-10	---
	1 Տիմ.6:4-5	---
	2 Տիմ.2:22ա,23	2 Տիմ.2:22բ, 24
2. Հակոբոս	Տիտոս 1:7, 3:3	Տիտոս 1:8-9; 3:1-2
	Հակ.3:15-16	Հակ.3:17-18
3. Պետրոս	1 Պետ.4:3	1 Պետ.4:7-11
4. Հովհաննես	2 Պետ.1:9	2 Պետ.1:5-8
	Հայտն.21:8; 22:15	---

❖ **«պոռնկություն, պղծություն»** Այս առաջին հունական տերմինը (*porneia*) սկզբնապես նշանակել է «պոռնիկ», սակայն հետագայում սկսել է օգտագործվել ընդհանուր սեռական պղծությունների համար (տես՝ 1 Կորնթ.6:9): Անգլերենի «պոռնոգրաֆիա» տերմինը ծագել է այս բառից: Երկրորդ «պղծություն» (*akatharsia*) տերմինը նույնպես ընդհանուր տերմին է սեռական անբարոյականության համար, չնայած որ սկզբում կիրառվել է ՀԿ-ում ծիսական անմաքրության կամ բարոյական անմաքրության իմաստներով: Պողոսը նկատի ուներ երկրորդ նշանակությունը:

❖ **«կիրք, չար ցանկություն»** Այս երկու տերմինները միասին կիրառվում են նաև 1 Թեսաղ.4:5-ում և թարգմանվում են «անսանձ՝ ցանկասեր կիրք»: Առաջին տերմինը՝ «կիրք» (*pathos*) կիրառվում է երկու տարբեր իմաստով՝ (1) չարչարանքի համար, և (2) սեռական ցանկության:

Երկրորդ տերմինը՝ «չար ցանկություն» (*epithumia*) նույնպես կիրառվում է երկու տարբեր իմաստով՝ ուժեղ անսանձ ցանկություն (1) բարու համար կամ (2) չարի: Համատեքստը պետք է որոշի, թե որ առանձնահատկությունն է հեղինակի կողմից կիրառվել որպես բառահիմք:

Սեռական մեղքերի այս ցանկը հնարավոր է կապ ուներ սուտ վարդապետների հետ: Գնոստիկ սուտ վարդապետները երկու տեսակի էին՝ (1) մարդիկ, որոնք ապրում էին ճգնավորի կյանքով՝ ինքնանվաստացումով և (2) նրանք, ովքեր մարմինը չէին համարում որպես հոգևոր կյանքի հետ համատեղվող և անձնատուր էին լինում մարմնավոր ցանկություններին: Հաճախ սեռական և ֆինանսական շահարկումները բնորոշ էին սուտ վարդապետներին:

❖ **«ագահություն»** Այս տերմինը սովորաբար կիրառվում էր ինչ-որ առարկաների ցանկության համար, սակայն սեռական շահարկումների համատեքստում, հնարավոր է, որ նշանակում էր ավելի ու ավելի սեռական հաճույքներ՝ ցանկացած գնով: Ոմանք ուրիշներին դիտարկում են որպես անձնական, սեռական կարիքները բավարարելու համար առարկաներ:

❖ **«որ կռապաշտություն է»** Ցանկացած բան, որը իշխում է, վերահսկում է կամ պահանջում է նվիրում, դառնում է կուռք, որը փոխարինում է Աստծուն: Ոմանց համար սեռական հաճույքները դառնում են իրենց կյանքերի, մտքերի և ծրագրերի թիրախը՝ նպատակը:

3:6 «Աստծո բարկությունը գալիս է» Շատ առումներով սա նման է Պողոսի կողմից Հռոմ. 1:18-2:16-ում արձանագրած քննարկմանը: Աստծո բարկությունը Աստվածաշնչում դիտարկվում էր երկու ժամանակային տարածաչափության մեջ՝ (1) մեղքի պատճառով մարդը պատժվում է հիմա՝ այս կյանքում (ժամանակավոր) և (2) Աստված դատելու է ամբողջ մարդկությանը մի օր (վախճանաբանությունը):

Այս հարցի շուրջ կա մի հունական ձեռագիր: Ավելի երկար տեքստը, որի մեջ ներառված է Սեմական մի դարձվածք՝ «անհնազանդության որդիների վրա», գտնվում է ունցիալ MSS א ,A, C, D, F, G, H, K, L և P ձեռագրերում: Այն բացակայում է MSS P^{46} և B ձեռագրերում: Եփես. 5:6 ավելի երկար տեքստը կարելի է գտնել բոլոր ձեռագրերում, որը հնարավոր է հանդիսանում է այս հավելման աղբյուրը (Bruce M Metzger, *A Textual Commentary On the Greek NT*, Բրյուս Մ. Մետցգր, *Հունարեն ՆԿ-ի Տեքստային Մեկնաբանություն*, էջ՝ 824):

3:7 «որոնց մեջ մի ժամանակ դու քէլ էիք քայլում» Կողոսացի հավատացյալների մշակույթը հեթանոսությունն էր եղել (տես՝ Հռոմ. 6:19, 1 Կորնթ. 6:11, Տիտոս 3:3): Այս հավատացյալները նախկինում մտածում և ապրում էին նմանատիպ մեղքերով:

3:8 «Բայց հիմա» Ուշադրություն դարձրե՛ք հակադրությանը (հին մարդը ի հակադրություն նոր մարդու):

❖ **«դեն նետեցեք այդ ամենը»** Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի հրամայական է, որը արտահայտում է հրատապություն: Հավատացյալները պետք է տարբերվեն: Պողոսը կիրառում էր հագուստը որպես փոխաբերություն մարդու ապրելակերպի ընտրության հարցում: Հավատացյալներին հորդորվում է հանել հին կյանքը և մի կողմ դնել ինչպես հագուստը (տես՝ Կող. 3:8,9, Եփես. 4:22,25,31, Հակ. 1:21, 1 Պետ. 2:1): Նրանք պետք է Քրիստոսին հագնեն (տես՝ Կող. 3:10, 12, 14, Եփ. 4:24, Հռոմ. 13:14, Գաղ. 3:27): Այս հավատացյալներին մի ժամանակ վերահսկում և իշխում էին իրենց չար ցանկությունները, սակայն հիմա՝ Քրիստոսի միջոցով, նրանք կարող են երես դարձնել դրանցից (տես՝ Հռոմ. 5-6):

❖ **«բարկություն»** Այս տերմինը նշանակում է շարունակական, երկարաժամկետ, եռացող բարկություն (տես՝ 2 Կորնթ. 12:20, Գաղ. 5:20, Եփես. 4:31):

❖ **«ցասում»** Այս տերմինը նշանակում է արագ բռնկվող բարկություն կամ զայրույթի պոռթկում (տես՝ 2 Կորնթ. 12:20, Գաղ. 5:20, Եփես. 4:31):

❖ **«չարություն»** Այս տերմինը նշանակում է «ապականված մտքեր» (տես՝ Հռոմ. 1:29, 1 Կորնթ. 5:8, Եփես. 4:31): Այն վերաբերում է ուրիշներին վիրավորելու ցանկությանը:

❖ **«հայհոյություն, կեղտոտ խոսակցություններ»** Մարդիկ լսում են. մեր խոսքը արտացոլում է մեր էությունը (տես՝ Մատթ. 12:34-35, 15:11, Մարկ. 7:20, Եփես. 4:29, 5:4, Հակ. 2:3-12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՍՔ
SPECIAL TOPIC: HUMAN SPEECH

I. ԲԱՑՄԱՆ ՄՏՔԵՐ ԱՌԱԿԱՑԻՑ
   Ա. Լեզուն՝ խոսքը, Աստծո պատկերի մի մասն է մարդկանց մեջ (այսինքն՝ խոսվեց և արարվեց ամեն ինչ և Աստված խոսում է Իր մարդկային ստեղծագործության հետ): Դա մեր էության ամենակենսական մասն է կազմում:
   Բ. Մարդկային խոսքը հնարավորություն է տալիս մեզ ուրիշների հետ հաղորդակցվելու այն մասին, թե ինչ ենք կյանքում զգում, վերապրում: Հետևաբար հայտնում է, թե ով ենք մենք իրականում (Առակ. 18:2, 4:23, 20-27): Խոսքը մարդու էության թթվային ստուգարքն է (Առակ. 23:7):
   Գ. Մենք սոցիալական էակներ ենք: Մեզ անհանգստացնում է, թե ընդունված և արդարացված ենք արդյո՞ք: Մեզ դա անհրաժեշտ է թե՛ Աստծուց և թե՛ մեր ընկերներից, բարեկամներից: Խոսքերն ունեն զորություն լուծելու այս կարիքները թե՛ դրական (Առակ. 17:10) և թե՛ բացասական (Առակ. 12:18) կերպով:
   Դ. Հսկայական զորություն կա մարդու խոսքի մեջ (Առակ. 18:20-21)՝ զորություն օրհնելու և բժշկելու (Առակ. 10:11,21) և զորություն անիծելու և կործանելու (Առակ. 11:9):
   Ե. Մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք այս բնագավառում (Առակ. 12:14):
II. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԱՌԱԿԱՑԻՑ
   Ա. Մարդկային խոսքի բացասական և կործանարար ներուժը
      1. չար մարդկանց խոսքերը (1:11-19, 10:6, 11:9,11, 12:2-6)
      2. շնացող կնոջ խոսքերը (5:2-5, 6:24-35, 7:5բ, 9:13-18, 22:14)
      3. ստախոսի խոսքերը (6:12-15,19, 10:18, 12:17-19,22, 14:5,25, 17:4, 19:5,9,28, 21:28, 24:28, 25:18, 26:23-28)
      4. հիմարի խոսքերը (10:10,14, 14:3, 15:14, 18:6-8)
      5. սուտ վկաների խոսքերը (6:19, 12:17, 19:5,9,28, 21:28, 24:28, 25:18)
      6. բամբասկոտի խոսքերը (6:14,19, 11:13, 16:27-28, 20:19, 25:23, 26:20)
      7. շուտափույթ ասված խոսքերը (6:1-5, 12:18, 20:25, 29:20)
      8. շողոքորթի խոսքերը (29:5)
      9. չափից շատ խոսքերը (10:14,19,23, 11:13, 13:3,16, 14:23, 15:2, 17:27-28, 18:2, 21:23, 29:20)
      10. ծռված խոսքերը (17:20, 19:1):
   Բ. Մարդկային խոսքի դրական, բժշկարար և շինող ներուժը
      1. արդարի խոսքերը (10:11, 20-21, 31-32, 12:14, 13:2, 15:23, 16:13, 18:20)
      2. խոհեմ մարդու խոսքերը (10:13, 11:12)
      3. գիտության խոսքերը (15:1,4,7,8, 20:15)
      4. բժշկության խոսքերը (15:4)
      5. մեղմ պատասխան տալու խոսքերը (15:1,4,18,23, 16:1, 25:15)
      6. հաճելի պատասխանի խոսքերը (12:25, 15:26,30, 16:24)
      7. օրենքի խոսքերը (22:17-21)

III. ՀԿ-Ի ՁԵՎԱՉԱՓԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԿ-ՈՒՄ

Ա. Մարդկային խոսքը հնարավորություն է տալիս հաղորդակցվելու ուրիշների հետ, թե ինչ ենք զգում կյանքի վերաբերյալ, հետևաբար հայտնում է մեր իրական էությունը՝ անձը (Մատթ. 12:33-37, 15:1-20, Մարկ. 7:2-23):

Բ. Մենք սոցիալական էակներ ենք: Մենք անհանգստացնում է այն, թե ընդունված և արդարացված ենք արդյո՞ք: Մեզ դա անհրաժեշտ է թե՛ Աստծուց, և թե՛ մեր ընկերներից, բարեկամներից: Խոսքերն ունեն զորություն լուծելու այս խնդիրները թե՛ դրական (2 Տիմ. 3:15-17) և թե՛ բացասական (Հակ. 3:2-12) կերպով:

Գ. Հսկայական զորություն կա մարդու խոսքի մեջ. զորություն օրհնելու և բժշկելու (Եփես. 4:29) և զորություն անիծելու (Հակ. 3:9): Մենք պատասխանատու ենք այն բաների համար, ինչ ասում ենք (Մատթ. 12:36-37, Հակ. 3:2-12):

Ե. Մենք դատվելու ենք մեր խոսքերով (Մատթ. 12:33-37, Ղուկ. 6:39-45) ինչպես նաև մեր գործերով (Մատթ. 25:31-46): Մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք (Գաղ. 6:7):

3:9 «մի՛ ստեք» Սա ներկա չեզոք (դեպոնենտ) հրամայական է՝ ժխտական հոդով, որը նշանակում է դադարեցնել ընթացքի մեջ գտնվող գործողությունը: Հունարեն նախադասությունը բխում է Կող. 3:9-ից մինչև Կող. 3:11: Քրիստոնեական խոսքը պետք է լինի ճշմարիտ, ազնիվ, շինություն տվող, և սիրով արտաբերված (տես՝ Եփես. 4:15):

3:10 «նոր մարդուն, որ նորոգված է» Սա ներկա կրավորական դերբայ է. ենթադրվող գործողություն կատարողը Աստված կամ Հոգին է: Քրիստոնեական կյանքը թե՛ վիճակ է (Եփես. 2:5,8) և թե՛ կատարելագործման գործընթաց (1 Կորնթ. 1:18): Նպատակը Քրիստոսի նման դառնալն է (տես՝ Հռոմ. 8:29, Գաղ. 4:19, Եփես. 1:4), Աստծո պատկերի պես նորոգվելը: Այս «նորոգությունը» (2 Կորնթ. 4:16 և Հռոմ. 12:2 և Տիտոս 3:5-ում գոյականը) Աստծո գործն է, որ յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա, և պետք է համագործակցի Աստծո հետ այն իրենց ներսում իրականացնելու համար (ինչպես Հոգու «լեցունությունը», նաև ներկա կրավորական դերբայ է Եփես. 5:18-ում):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆՈՐՈԳՎԵԼ (*anakainōsis*)
SPECIAL TOPIC: RENEW (*anakainōsis*)

Հունարեն այս տերմինը իր տարբեր ձևերով (*anakainoō, anakainizō*) ունի երկու հիմնական նշանակություն՝

1. «ինչ-որ բան նոր կամ տարբեր դարձնելու պատճառ հանդիսանալ» (այսինքն՝ ավելի լավ) – Հռոմ. 12:2; Կող. 3:10
2. «դեպի նախկին ավելի նախընտրելի վիճակին վերադառնալու փոփոխության պատճառ հանդիսանալ» - 2 Կորնթ. 4:16; Եբր. 6:4-6 (վերցված է Լու և Նիդայի *Հունարեն-անգլերեն Բառարանից*, հատոր 1, էջ՝ 157, 594 /Louw and Nida *Greek-English Lexicon*/)

Մուլթն և Միլիգան, *Հունարեն Կտակարանի Բառարան* /Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*/ գրքում ասում է, որ այս տերմինը (այսինքն՝ *anakkainōsis*) հնարավոր չէ գտնել Պողոսից առաջ գոյություն ունեցած հունարեն գրականության մեջ: Հնարավոր է, որ Պողոսն ինքն է կազմել այս տերմինը (էջ՝ 34):

Ֆրենկ Սթեգը, *Նոր Կտակարանի Աստվածաբանություն* (Frank Stagg *New Testament Theology*) գրքում տալիս է մի հետաքրքիր մեկնություն.

«Վերածնունդն ու նորոգումը միայն Աստծուն է պատկանում: *Anakkainōsis* բառը «նորոգություն» տերմինի համար, գործողության գոյական է և առկա է Նոր Կտակարանում բայի տարբեր ձևերի հետ համատեղ՝ նկարագրելու շարունակական նորոգություն, ինչպես

Հռոմ. 12:2-ում. «Ձեր մտքի նորոգությամբ նորոգվեք» և 2 Կորնթացիների 4:16-ում՝ «Մեր ներքին մարդը նորոգվում է օրեցօր»: Կողոսացիների 3:10-ը նկարագրում է «նոր մարդուն» որպես մեկի, որը «նորոգված է գիտությամբ՝ ըստ իր Արարչի պատկերի»: Այսպիսով «նոր մարդը», «կյանքի նորոգությունը», «վերածնունդը» կամ «նորոգությունը» ինչպես որ նախատեսված է եղել, հանդիսանում է Աստծո կողմից՝ որպես հավիտենական կյանք տվողի և ապահովողի, սկսած և շարունակելի գործը» (էջ՝ 118):

❖ **«ճշմարիտ գիտությամբ»** Սա տառացի նշանակում է «լրիվ գիտությամբ» (*epignōsin*): Գնոստիկների սուտ գիտությանը հակառակ:

3:11 Այս համարը արտահայտում է միևնույն այն ճշմարտությունը, որը գրված է Հռոմ. 3:22,29, 10:12, 1 Կորնթ. 12:13, Գաղ. 3:28 և Եփես. 2:11-22-ում: Բոլոր մարդկային խոչընդոտները և աչառությունները Ավետարանի միջոցով հեռացվում են: Սա չի հեռացնում բոլոր աստվածաշնչյան աչառությունները, օրինակ՝ ամուսնու և կնոջ (տես՝ Եփես. 5:21-31) կամ հարուստի և աղքատի միջև փոխհարաբերությունները (տես՝ Հակոբոս 1:9-10), սակայն հեռացնում է ամբողջ անհավասարությունը:

❖ **«չկա բարբարոս, սկյութացի»** Սա վերաբերում էր մշակույթով և անմշակույթ հեթանոսներին: Ըստ հնչյունաբանության այս «բարբարոս» տերմինը սկզբնապես վերաբերում էր մարդկանց կողմից հունա-հռոմեական Կայսրության Եվրոպական ցեղերի խոսքը ընկալելու իրենց կերպին, որոնց խոսքը լսում էին որպես «բար բար բար» հնչյուններ: Հունա-հռոմեական հասարակությունը Սկյութացիներին համարում էր որպես անքաղաքակիրթ և բարբարոս ազգային ինքնություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՌԱՍՍԻԶՄ
SPECIAL TOPIC: RACISM

I. Ներածություն
   Ա. Սա հասարակության ներսում մեղավոր մարդկանց կողմից կիրառվող միջազգային արտահայտություն է: Սա մարդկության էգոն է, որը ուրիշների թիկունքում ինքնաբավ է: Ռասսիզմը շատ առումներով ժամանակակից երևույթ է, մինչ ազգայնականությունը (կամ ցեղայնությունը) շատ ավելի հին արտահայտություն է:
   Բ. Ազգայնականությունը սկսվել է Բաբելոնից (Ծննդոց 11) և սկզբնապես կապված է Նոյի երեք որդիների հետ, որոնցից սերվել են այսպես կոչված ռասսաները (Ծննդոց 10): Ինչևէ Սուրբ Գրքից հայտնի է, որ մարդկությունը մի աղբյուրից է սերվել (տես՝ Ծնն. 1-3; Գործք 17:24-26):
   Գ. Ռասսիզմը բազմաթիվ նախապաշարմունքներից պարզապես մեկն է: Դրանցից մի քանիսն են (1) կրթական սնոբիզմը, (2) սոցիալ-տնտեսական հպարտությունը, (3) ինքնա-արդարացնող կրոնավոր օրինապաշտությունը, և (4) քաղաքական դոգմատիզմի որդեգրումը:

II. Աստվածաշնչյան Աղբյուրներ
   Ա. Հին Կտակարան
      1. Ծննդոց 1:27 – Մարդիկ՝ կին և տղամարդ, ստեղծվեցին Աստծո պատկերով և նմանությամբ, որը նրանց յուրահատուկ է դարձնում: Այն նաև ցույց է տալիս նրանց անհատական արժեքը և արժանապատվությունը (տես՝ Հովհ. 3:16):
      2. Ծննդոց 1:11-25 – Արձանագրում է այս արտահայտությունը. «. . . իր տեսակի պես . . .» տասն անգամ: Այս խոսքը գործածվում է պաշտպանելու ռասսայական խտրականությունը: Սակայն համատեքստից հայտնի է, որ այն վերաբերում է կենդանիներին և բույսերին և ոչ թե մարդկանց:

3. Ծննդոց 9:18-27 – Այս խոսքը գործածվում է պաշտպանելու ռասսայական գերակայությունը: Պետք է հիշենք, որ Աստված չանիծեց Քանանը: Նոյը՝ նրա հայրը, անիծեց նրան, երբ արթնացավ իր խումարից: Աստվածաշունչը երբեք չի արձանագրում, որ Աստված հաստատեց այս երդումը՝ անեծքը: Եթե անգամ հաստատեր, սա չպետք է որ ազդեր սևամորթ ռասսային: Քանանը Պաղեստինում բնակվողների հայրն էր և Եգիպտական ժայռապատկերները ցույց են տալիս, որ նրանք սևամորթ չէին:
4. Հեսու 9:23 – Սա գործածվում է ապացուցելու, որ մի ռասսան ծառայելու է մյուսին: Սակայն համատեքստում Գիբոնացիները Հրեաների հետ միևնույն ռասսայից են սերված:
5. Եզրաս 9-10 և Նեեմիա 13 – Սա հաճախ գործածվում է ռասսայական իմաստով, սակայն համատեքստը ցույց է տալիս, որ ամուսնությունները դատապարտվում էին ոչ թե ռասսայական (նրանք Նոյի նույն որդուց էին սերվել, Ծննդոց 10), այլ կրոնական պատճառներով:

Բ. Նոր Կտակարան

1. Ավետարանները
   ա. Հիսուսը մի քանի անգամ օգտագործեց Հրեաների և Սամարացիների միջև եղած ատելությունը, որը ցույց է տալիս, որ ռասսայական ատելությունը անհարկի է:
      (1) Բարի Սամարացու առակը (Ղուկաս 10:25-37)
      (2) Ջրհորի մոտ սամարացի կնոջ դեպքը (Հովհաննես 4:4)
      (3) Երախտապարտ բորոտը (Ղուկաս 17:7-19)
   բ. Ավետարանը ամբողջ մարդկության համար է
      (1) Հովհաննես 3:16
      (2) Ղուկաս 24:46-47
      (3) Եբրայեցիների 2:9
      (4) Հայտնություն 14:6
   գ. Արքայությունը իր մեջ բովանդակելու է ամբողջ մարդկությանը
      (1) Ղուկաս 13:29
      (2) Հայտնություն 5
2. Գործք Առաքելոց
   ա. Գործք 10-ը միանշանակ Աստծո տիեզերական սիրո և ավետարանի տիեզերական պատգամի վերաբերյալ է:
   բ. Պետրոսը հարձակման ենթարկվեց Գործք 11-ում իր գործողությունների համար և այս խնդիրը չլուծվեց մինչև Գործք 15-ի Երուսաղեմի Խորհուրդը գումարվեց և եկան միևնույն հայտարարի: Առաջին դարի հրեաների և հեթանոսների միջև լարվածությունը շատ մեծ էր:
3. Պողոսը
   ա. Քրիստոսի մեջ խոչընդոտներ չկան
      (1) Գաղ. 3:26-28
      (2) Եփես. 2:11-22
      (3) Կող. 3:11
   բ. Աստված աչառ չէ
      (1) Հռոմ. 2:11
      (2) Եփես. 6:9
4. Պետրոսն ու Հակոբոսը
   ա. Աստված աչառ չէ, 1 Պետրոս 1:17
   բ. Քանի որ Աստված աչառություն չի դնում, ուրեմն նույնը պետք է անի Իր ժողովուրդը, Հակոբոս 2:1

5. Հովհաննես

ա. Հավատացյալների պատասխանատվության ամենաուժեղ սահմանումներից մեկը գտնվում է 1 Հովհաննես 4:20-ում

III. Եզրահանգում

Ա. Ռասսիզմը կամ դրա հետ կապված՝ նախապաշարմունքը Աստծո զավակների համար լիովին անընդունելի է: Ահա մի մեջբերում Հելեն Բարնեթից, որը խոսեց 1964 թ-ին Նոր Մեքսիկայի, Գլորիենտայի Քրիստոնեական Կյանքի Հանձնարարության համաժողովին.

«Ռասսիզմը հերետիկոսություն է, քանի որ աստվածաշնչյան և քրիստոնեական չէ, առավել ևս գիտական չէ»:

Բ. Այս հիմնախնդիրը Քրիստոնյաներին հնարավորություն է տալիս ցուցաբերելու իրենց Քրիստոսակերպ սերը, ներողամտությունը և կորած մարդկանց հասկանալը: Այս ոլորտում քրիստոնեական մերժողականությունը ցույց է տալիս անհասուն վիճակ և առիթ է տալիս չարին դանդաղեցնելու հավատացյալի հավատքն ու աճը: Այն նաև կարող է խոչընդոտ հանդիսանալ մեղավոր մարդկանց համար Քրիստոսին գալու հարցում:

Գ. Ի՞նչ կարող եմ անել: (Այս բաժինը վերցված է Քրիստոնեական Կյանքի Հանձնարարական բուկլետից, որը կոչվում է «Ռասսայական Կապեր» /Christian Life Commission "*Race Relations*"/)

ԱՆՀԱՏԱՊԵՍ.

- Հանձն առեք ձեր պատասխանատվությունը ռասսայականության հետ կապված խնդիրների լուծման մեջ
- Այլ ռասսաների պատկանող անձանց հետ աղոթքի, Աստվածաշնչի ուսումնասիրության և հաղորդակցության միջոցով, փորձեք մաքրել ձեր կյանքը ռասսայական խտրականությունից:
- Արտահայտեք ձեր համոզմունքները ռասսայականության վերաբերյալ, հատկապես այնտեղ, որտեղ մարդիկ հրահրում են ռասսայական ատելություն և անձեռնմխելի են:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

- Ընդունեք ընտանիքի ազդեցության կարևորությունը այլ ռասսաների հանդեպ ճիշտ վերաբերմունք զարգացնելով:
- Փորձեք զարգացնել Քրիստոնեական վերաբերմունք՝ կեցվածք, պարբերաբար խոսելով այն մասին, թե ինչ են տնից դուրս լսում երեխաներն ու ծնողները ռասսայականության հարցի շուրջ:
- Ծնողները պետք է զգուշանան այլ ռասսաների պատկանող մարդկանց հետ հարաբերվելու Քրիստոնեկան օրինակ ծառայելու հարցում:
- Առիթներ ստեղծեք ռասսայական տարբեր պատկանելիության մարդկանց հետ ընտանիքներով ընկերանալու:

ՁԵՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

- Ռասսայականության թեմայի շուրջ քարոզելու և սովորեցնելու միջոցով, համայնքը կարող է մոտիվացվել լավ օրինակ ծառայելու ամբողջ հասարակության մեջ:
- Համոզվեք, որ եկեղեցում երկրպագության, հաղորդակցության և ծառայության դռները բաց են բոլորի համար, ճիշտ ինչպես ՆԿ-յան եկեղեցիներում վերցված էին ռասսայական արգելքները (Եփես. 2:11-22, Գաղ. 3:26-29):

ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ

- Աշխատանքային միջավայրում օգնեք հաղթահարելու ամեն տեսակի ռասսայական խտրականություն:

- Աշխատեք ամեն տեսակի հասարակական կազմակերպությունների միջոցով ապահովելու հավասար իրավունքներ և հնարավորություններ, հիշելով, որ ռասսայական խնդիրն է հարձակման թիրախը և ոչ թե մարդիկ: Նպատակը հասկացողություն զարգացնելն է, և ոչ թե դառնության մթնոլորտ ստեղծելը:
- Եթե իմաստուն եք գտնում այսպես անելը, ապա այս հարցով մտահոգված քաղաքացիներից կազմակերպեք ռասսայական փոխհարաբերություններ զարգացնելու համար ընդհանուր հանրային և մասնավոր գործողությունների կրթության համար համայնքում հաղորդակցության բաց դասեր:
- Աջակցեք օրենսդրությանը և օրենսդիրներին ռասսայական արդարության օրենքներն ընդունելու հարցում և հակառակվեք այն մարդկանց, ովքեր հանուն իրենց քաղաքական շահերի ռասսայական խտրականություն են գործադրում:
- Եղեք հարկադիր պաշտոնյաների ջատագովը, որպեսզի օրենքները առանց խտրականության հարկադրեն մարդկանց կատարելու:
- Խուսափեք բռնությունից և ձևավորեք հարգանք օրենքի հանդեպ, անելով ամեն հնարավոր բան որպես Քրիստոնյա քաղաքացի, համոզվելու համար, որ օրինական կառույցները գործիքներ չեն դառնում այն մարդկանց ձեռքերում, որոնք խտրականություն են զարգացնում:
- Որպես օրինակ ունեցեք Քրսիտոսի հոգին և միտքը բոլոր մարդկային փոխհարաբերությունների մեջ:

❖ **«Քրիստոսն ամեն ինչ է, ամեն բանի մեջ»** Հիսուսն է ամենաբարձր ազդեցությունն ու ոլորտը: Նրա մեջ են բոլոր մարդկային խտրականությունները Աստծո սիրով հեռացվում: Բոլորը կարող են մոտենալ, բոլորը ողջունելի են, բոլորն էլ դառնում են ընտանիքի մաս (տես՝ Գաղ. 3:28): Քրիստոսում փրկությունը Անկման (տես՝ Կող. 3:10, «պատկեր») և Բաբելոնի Աշտարակի (տես՝ Ծննդոց 10-11, ժողովուրդների բաժանումը) հակադարձումն է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3:12-17

12Ուստի որպես Աստծո ընտրյալներ, սուրբ ու սիրելի, ձեր վրա հագեք գութը, ողորմությունը, քաղցրությունը, խոնարհությունը, հեզությունը, համբերատարությունը, 13իրար հանդուրժելով և իրար ներելով, եթե մեկը մյուսի դեմ տրտունջ ունենա: Ներեցե՛ք միմյանց, ինչպես Քրիստոսն էլ ձեզ ներեց: 14Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կատարելության կապն է: 15Եվ թո՛ղ Աստծո խաղաղությունն իշխի ձեր սրտերի մեջ, որին կանչվեցիք մեկ մարմնով. և դուք շնորհակալ սիրտ ունեցեք: 16Թող Քրիստոսի Խոսքը ձեր մեջ բնակվի առատապես, կատարյալ իմաստությամբ. միմյանց սովորեցնելով ու հորդորելով սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով, շնորհակալությամբ լի՝ ձեր սրտերում Տիրոջը երգելով: 17Եվ ինչ որ անեք, թե՛ խոսքով, և թե՛ գործով, բոլորը Տեր Հիսուսի անունով արեք, գոհություն տալով Աստծուն և Հորը՝ Նրա միջոցով:

3:12 «Աստծո ընտրյալներ, սուրբ ու սիրելի» Այս տերմինները կիրառվում էին Իսրայելը նկարագրելու համար (այսինքն՝ Ելից 19:5-6, 2 Օրինաց 4:37, 7:7,8, 10:15), սակայն այժմ դրանք բնութագրում են եկեղեցին (տես՝ Գաղ. 6:16, 1 Պետ. 2:5,9. Հայտն. 1:6): Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբ, Եփես. 1:4-ում:

Ուշադրություն դարձրե՛ք, որ Աստծո ժողովրդի նպատակը սրբությունն է՝ ընտրության միջոցով (տես՝ Եփես. 1:4), ոչ թե արտոնյալ դիրքը: Իսրայելը բաց թողեց իր ավետարանելու մադատը՝ լիազորությունը (տես՝ Ծննդ. 12:3, Ելից 19:5): Եկեղեցուն հստակ տրվել է այս հանձնարարությունը (տես՝ Մատթ. 28:19-20, Ղուկ. 24:46-47, Գործք 1:8): Հավատացյալները կանչված են լուրը լինելու և վկաներ լինելու: Տե՛ս Եփեսացիների 1:1-23 Գ. Համատեքստային Հասկացություններ բաժնում:

Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ ընտրությունը հնարավոր չէ առանձնացնել հավատացյալի գործելու պատասխանատվությունից: Աստծո ինքնիշխանությունը և մարդու ազատ կամքը միահյուսված են «ուխտի» այս հասկացության մեջ: Աստված նախաձեռնում է և դնում է Իր պայմանները, սակայն մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել:

❖ **«հագեք՛»** Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի հրամայական եղանակ է, որը հրատապություն է արտահայտում: Այստեղ Պողոսը կրկին շարունակում է կիրառել հագուստ բառը որպես Քրիստոնեական կյանքի համար փոխաբերություն և լիազորություն (այսինքն՝ Կող.3:8,10, Եփես.4:22, 24, 25): Անգամ հնարավոր է, որ սա եղել է մկրտության համար կիրառվող տերմինաբանություն (տես՝ Գաղ.3:27): Այս համատեքստը, որը սկսվում է «դե՛ն նետեք» (Կող.3:8-10) զուգահեռվում է Գաղ. 5:19-21-ի հետ («մարմնի գործերը») և 5:22-25-ի հետ («Հոգու պտուղը»): Հավիտենական կյանքն ունի տեսանելի առանձնահատկություններ:

NASB	**«ողորմած սիրտ»**
NKJV	**«գթասրտություն»**
NRSV, TEV	**«ողորմածություն»**
NJB	**«սրտացավություն»**

Սա տառացիորեն նշանակում է «գթության անոթներ» (տես՝ 2 Կորնթ.6:12, Փիլ.1:8, 2:1, Փիլիմոն 7,12,20): Հնում հավատում էին, որ զգացմունքների տեղը գտնվում է ստորին կոնքում (որովայնում):

❖ **«քաղցրություն»** Սա պետք է լինի Քրիստոնյաների միմյանց հետ շփման կերպը (տես՝ Հռոմ.2:4, 9:23, 11:22, 2 Կորնթ.6:6, Գաղ.5:22, Եփես.4:32, Կող.3:12, Տիտոս 3:4):

❖ **«խոնարհություն»** Սա Քրիստոնյային յուրահատուկ առաքինություն է (տես՝ Եփես.4:2, Փիլ. 2:3): Ստոիկները խոնարհությունը (հեզությունը) համարում էին որպես թուլություն և չէին ներառում իրենց առաքինությունների ցանկում: Աստվածաշնչում միայն երկու մարդիկ են կոչվել խոնարհ՝ Մովսեսը (տես՝ Թվոց 12:3) և Հիսուսը (տես՝ Մատթ.11:29, Փիլ.2:8): Այս հատկությունը Աստծո կամքն է յուրաքանչյուր հավատացյալի համար (տես՝ Մատթ.18:4, 23:12, Հակ.4:6,10, 1 Պետ.5:5,6): Այս տերմինը կիրառվում է բացասական իմաստով Կող.2:18, 23-ում:

❖ **«հեզություն»** Սկզբնապես սա վերաբերում էր տնային դարձված կենդանիներին (ձիերին, ուղտերին, էշերին), որոնց ուժը ուղղորդվում էր իրենց տիրոջ նպատակի՝ գործի համար: Աստված չի ուզում մեզ կոտրել, այլ ուղղորդել Իր պարգևների մեջ Իր փառքի համար: Պողոսը հաճախ է կիրառում այս փոխաբերությունը Քրիստոնեական կյանքի համար (տես՝ 1 Կորնթ.4:21, 2 Կորնթ. 10:1, Գաղ.5:23, 6:1, Եփես.4:2, Կող.3:12, 1 Տիմ.6:11, 2 Տիմ.2:25):

❖ **«համբերություն»** Այս տերմինը հաճախ կիրառվում է Իր ժողովրդի հանդեպ Աստծո ցուցաբերած համբերության համար (տես՝ Հռոմ.2:4, 9:22, Տիտոս 3:2, 1 Պետ.3:20) կամ Հիսուսի համբերության համար (տես՝ 1 Տիմ.1:16, 2 Պետ.3:15): Այն օգտագործվում է հավատացյալներին հորդորելու՝ քաջալերելու իրար հետ վարվելու հարցում (տես՝ 1 Կորնթ.13:4, Գաղ.5:22, Եփես.4:2, 2 Տիմ.4:2):

3:13

NASB, NKJV	**«իրար հանդուրժելով»**
NRSV, NJB	**«իրար հանդուրժեք»**
TEV	**«մեկդ մյուսի հանդեպ եղեք հանդուրժող»**

Սա ներկա ժամանակի չեզոք սեռի դերբայ է (կիրառված որպես հրամայական), որը ենթադրում է հոժարակամ անպատասխան՝ առանց խոսքի (տես՝ Եփես.4:2, Փիլ.2:3-4):

❖ **«իրար ներելով»** Սա ներկա չեզոք (դեպոնենտ) դերբայ է: Սա շնորհք՝ «ձրի ներել» բառի միևնույն հունարեն արմատից է: Հավատացյալների ներված լինելու նշաններից մեկն այն է, որ նրանք էլ ներում են ուրիշներին (տես՝ Մատթ. 5:7, 6:15, 18:22-35, Մարկ. 11:25, Ղուկ. 6:36-38, Եփես. 4:32, Հակ. 2:13, 5:9): Ուրիշներին ներելը ներման համար հիմք չի հանդիսանում, սակայն դա նրա պտուղն է:

❖ **«մեկը մյուսի դեմ տրտունջ ունենա»** Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է, որը նշանակում է հավանական հետագա գործողություն: Տրտունջներ լինելո՛ւ են: Քրիստոնյաները այլ Քրիստոնյաների հետ ընկնելու են հակասությունների՝ անախորժությունների մեջ, սակայն Հիսուսի խաչը պետք է դադարեցնի դրանք (տես՝ Հռոմ. 14:1-15:13):

❖ **«ինչպես Քրիստոսն էլ ձեզ ներեց»** Սա է այն հիմքը, որով հավատացյալները պետք է միմյանց հետ վարվեն (տես՝ Եփես. 4:32, Հռոմ. 15:7):

Հունարեն ձեռագրերում առկա են «Տեր», «Քրիստոս», «Աստված» և «Աստված Քրիստոսով» տարբերակները: «Տեր» խոսքը կարելի է գտնել հնագույն հունարեն P^{46}, A, B, D * ձեռագրերում և հավանաբար բնագիրն այսպիսին է:

3:14 «*հագեք* սերը, որ կատարելության կապն է» Սերը, որը միաբանության արդյունք է, տարբերակիչ նշան է Քրիստոնյայի համար (տես՝ Եփես. 4:2-3, 1 Կորնթ. 13, Գաղ. 5:22):

3:15 «Քրիստոսի/ Աստծո խաղաղությունը» Այս տերմինը սկզբնապես նշանակում էր «իրար կապելով այն, ինչ կոտրվել էր» (տես՝ Հովհ. 14:27, 16:33, Փիլ. 4:7): ՆԿ-ը խաղաղության մասին երեք կերպ է խոսում՝

1. Աստծո հետ Քրիստոսի միջոցով մեր խաղաղության (տես՝ Կող. 1:20) որպես օբյեկտիվ (վարդապետական) կողմը
2. Աստծո հետ շիտակ լինելու որպես սուբյեկտիվ (փորձառական) կողմը (տես՝ Հովհ. 14:27, 16:33, Փիլ. 4:7)
3. որպես Աստված՝ Քրիստոսի միջոցով, որը Աստծո խորհուրդն է (տես՝ Եփես. 2:14-17, Կող. 3:15), հավատացյալ հրեաներին և հեթանոսներին միաձուլող՝ միաբանող մի նոր ժողովրդի (մարմնի):

Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Խաղաղություն</u>, Կող. 1:20-ում:

❖ **«իշխի»** Սա Ներկա ներգործական հրամայական է: Ի հակադրություն սուտ վարդապետների վերաբերյալ Կող. 2:18-ում մրցավարների, մեր դատավորը, առաջնորդը և մրցավարը Քրիստոսն է:

❖ **«սիրտ... սրտեր»** Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Սիրտ</u>, Կող. 2:2-ում:

❖ **«որին կանչվեցիք»** Աստված միշտ նախաձեռնողն է հավատացյալներին դեպի Իրեն կանչելու, ընտրելու և սիրահետելու հարցում (տես՝ Կող. 3:12, Հովհ. 6:44, 65, Եփես. 1:4-5,11): «Կանչ» տերմինը (*kaleō*) կիրառվում է աստվածաբանական մի քանի նշանակությամբ՝

1. Աստված Քրիստոսի միջոցով մեղավորներին կանչում է փրկության
2. մեղավորները կանչում են Տիրոջ անունը՝ փրկվելու համար (տես՝ Հռոմ. 10:9-13)
3. հավատացյալները կանչված են ապրելու Քրիստոսի նման (տես՝ Եփես. 4:1)
4. հավատացյալները կանչված են ծառայության գործին (տես՝ 1 Կորնթ. 12:4-7)

Տե՛ս, Հատուկ Թեմա Եփես. 4:1-ում:

❖ **«մեկ մարմնով»** Սա խոսում է տարաձայնությունների մեջ միաբանության մասին (տես՝ Կող. 1:18,24; Եփես. 4:4-6): Ուշադրություն դարձրեք, որ շեշտադրվում է ոչ թե անձնական ընտրությունը, այլ հավաքականը: Փրկությունը ոչ միայն անձնական է, այլ նաև հավաքական:

Հռոմի Եկեղեցում իշխանության շահարկման ի պատասխան Բողոքական Բարեկարգիչները շեշտադրում էին Աստծո առաջ անհատների իրավունքներն ու պարտավորությունները: Այնուհանդերձ նրանց սահմանումը դարձավ սուրբգրային չափազանցություն: Աստվածաշունչը չի սովորեցնում «հավատացյալի քահանայություն», այլ «հավատացյալների քահանայություն»: Սա մի վարդապետություն չէ, որը շեշտադրում է անհատի ազատությունը, այլ (1) յուրաքանչյուր հավատացյալի մարմնավոր կյանքի պատասխանատվությունը (տես՝ 1 Կորնթ. 12:7) և (2) Մեծ Հանձնարարության Քրիստոնեությունը (տես՝ Մատթ. 28:18-20, Ղուկ. 24:46-47, Գործք 1:8):

❖ **«շնորհակալ սիրտ ունեցեք»** Սա Ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական էր՝ «շարունակեք միշտ շնորհակալ լինել»: Երախտագիտությունը Քրիստոնեական հասունության նշան է՝ Հոգով լեցուն կյանքի (տես՝ Կող. 3:17, Եփես. 5:20, 1 Թեսաղ. 5:18): Սա հրաժարական չէ վճռականությունից՝ որոշում կայացնելու հնարավորությունից (ինչպես Իսլամում), այլ սուրբգրային աշխարհայացք, որ Աստված մեր հետ է և մեր կողմից է նույնիսկ դժվարությունների և այս մեղավոր աշխարհի տարբեր իրավիճակների մեջ:

3:16 «Թող Քրիստոսի Խոսքը ձեր մեջ բնակվի առատապես» Սա ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ է՝ երկրորդ դեմք, հոգնակի թիվ: «Քրիստոսի Խոսքը» կարող է վերաբերել (1) ավետարանին, (2) Նրա անձնական ներկայությանը, կամ (3) Սուրբ Հոգուն: Ուշադրություն դարձրեք, որ այս ներբնակեցումը չի լինում ինքնաբերաբար՝ մեխանիկորեն (ոչ էլ անհատական է կամ հավաքական): Հավատացյալները պետք է համագործակցեն Քրիստոնեական կյանքում, ինչպես անում են փրկության հարցում:

Գոյություն ունի մեկ այլ հունարեն ձեռագրային տարբերակ, որը նման է այս խոսքին Կող. 3:13 և 15-ում: Դպիրները հակված են եղել միավորելու Պողոսի արտահայտությունները: «Քրիստոսի Խոսքը» յուրահատուկ արտահայտություն է, որը ՆԿ-ում կարելի է գտնել միայն այստեղ: Հետևաբար, այն փոխվել է «Աստծո Խոսքը» (MSS A, C*) կամ «Տիրոջ Խոսքը» (MS ℵ*) ձեռագրերում: Շատ ավելի լավ ձեռագրերը՝ P^{46}, $ℵ^{2}$, B, C^{2}, D, F, G և ամենահին թարգմանությունները տալիս են «Քրիստոսի Խոսքը»:

Կողոսացիների և Եփեսացիների ընդհանուր համատեքստը շատ նման են: Այս համարի համազորը Եփեսացիների թղթում 5:18-ն է: Հոգով լեզուն կյանք նշանակում է ամեն օր նմանվել Քրիստոսին կամ թույլ տալ, որ Քրիստոսի Խոսքը և միտքը մեզ ուղղորդի՝ առաջնորդի կյանքի յուրաքանչյուր բնագավառում, հատկապես միջանձնային հարաբերություններում:

Այս համարը երկիմաստ է հունարեն «մեջ» (*en*) բառի հետ կապված: Դա նաև կարելի է թարգմանել «շրջապատում, միջավայրում»: «Մեջ» բառն ունի անհատական թիրախավորում, իսկ «միջավայրում» խոսքը՝ ավելի հավաքական է (տես՝ Կող. 1:27):

❖ **«կատարյալ իմաստությամբ»** Սա սուտ վարդապետների կողմից մարդկային իմաստությունը չափից ավելի կարևորելու նպատակով է: Քրիստոսի խոսքն է (Հոգով լեցուն կյանքը) ճշմարիտ իմաստությունը: Իմաստությունը անձ է (տես՝ Առակ. 8:22-31) և ապրելակերպ, ոչ թե առանձին ճշմարտություն կամ օրենքներ:

❖ **«սաղմոսներով»** NKJV և NASB թարգմանությունները տալիս են «սովորեցնել երգերով», սակայն NRSV և NJB թարգմանությունները տալիս են «ուսուցիչներն իրենց սրտերում երգելով»: TEV թարգմանությունը՝ Աստծուն երգերով երկրպագելով:

Այս համարով (և Եփես. 5:19) կարելի է անդրադառնալ երկրպագության մեջ երաժշտական գործիքների նախասիրության հարցում ժամանակակից հակասություններին, քանի որ այստեղ նշված են երաժշտության մի քանի տարբեր տեսակներ՝ (1) սաղմոսներ, (2) օրհներգեր, և (3) հոգևոր երգեր: Չնայած որ մենք չենք կարող ճանաչել բոլոր տեսակները, ակնհայտ է, որ առաջին եկեղեցիները օգտագործել են երաժշտության մի քանի տեսակներ: Կարևորը երկրպագուի սիրտն է, ոչ թե երաժշտությանը տեսակը՝ ձևը (տես՝ Կող. 3:17):

3:16-17 Եփես.5:18-21-ի և Կող.3:16-17-ի միջև կա աստվածաբանական և կազմության զուգահեռներ: Եփեսացիներում ներկա կրավորական հրամայական է՝ «միշտ լցվե՛ք», մինչդեռ Կողոսացիներում առկա է ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ՝ «թող Քրիստոսի Խոսքը ձեր մեջ բնակվի»: Նաև Եփեսացիներում հրամայականին հաջորդում է հինգ ներկա ժամանակի դերբայներ, որոնք նկարագրում են Հոգով լեցուն կյանքը:

(1) Եփես.5:19, խոսելով իրար հետ սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով (ներկա ներգործական)
(2) Եփես.5:19, երգելով (ներկա ներգործական)
(3) Եփես.5:19, սաղմոս ասելով (ներկա ներգործական)
(4) Եփես.5:20, շնորհակալություն հայտնելով (ներկա ներգործական)
(5) Եփես.5:21, իրար հնազանդվելով (ներկա չեզոք)

Կողոսացիներում այս դերբայներից մի քանիսը նույնպես հանդիպում են՝

(1) Կող.3:16, սովորեցնելով (ներկա ներգործական)
(2) Կող.3:16, հորդորելով սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով (ներկա ներգործական)
(3) Կող.3:16, երգելով (ներկա ներգործական)
(4) Կող.3:17, գոհություն տալով (ներկա ներգործական)

3:17 «Եվ ինչ որ անեք, թե՛ խոսքով և թե՛ գործով» Սա կարևորագույն հոգևոր ճշմարտություն է: Հավատացյալները պետք է իրենց բոլոր շարժառիթները և գործողությունները կապեն Աստծո հետ՝ Քրիստոսի միջոցով: Մեր կյանքի բոլոր բնագավառները «Տիրոջ համար» են: Հավատացյալները չեն ապրում իրենց համար (տես՝ Կող.3:23, Հռոմ.14:7-9, 1 Կորնթ.10:31, 2 Կորնթ.5:15, եփես.6:7, 1 Պետ.4:11): Այս ճշմարտությունը կարող է հեղափոխել ժամանակակից, արևմտյան մտայնության, անհատին մեծարող եկեղեցուն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3:18-21
18Կանա՛յք, հնազանդ եղեք ձեր ամուսիններին, ինչպես վայել է Տիրոջով: 19Այրե՛ր, սիրեցեք ձեր կանանց և նրանց հանդեպ դառը մի՛ եղեք: 20Որդինե՛ր, ամեն բանի մեջ հնազանդ եղեք ձեր ծնողներին, որովհետև դա է հաճելի Տիրոջ առջև: 21Հայրե՛ր, մի՛ գրգռեք ձեր զավակներին, որ չվհատվեն:

3:18 «Կանա՛յք, հնազանդ եղեք ձեր ամուսիններին» Սա ներկա ժամանակի չեզոք սեռի հրամայական եղանակ է: Երբ Քրիստոսի Խոսքը (այսինքն՝ Հոգով լեցուն կյանքը, տես՝ Եփես.5:18) բնակվում է հավատացյալի մեջ, այն ազդում է իր կյանքի բոլոր բնագավառների վրա: Համազոր խոսքերն են Եփես.5:21-22, Տիտոս 2:5, 1 Պետ.3:1, սակայն հիշե՛ք, որ առաջինը գրվել է Կողոսացիներին ուղղված նամակը: Եփեսացիների թուղթը արտահայտում է բոլոր հավատացյալների համար հնազանդության տիեզերական սկզբունքները՝ Եփես.5:21-ում (ներկա չեզոք դերբայ) և կիրառում է Քրիստոնեական ընտանիքը որպես երեքպատիկ ընտանեկան օրինակ, թե ինչպես է գործում «Հոգով լեցուն» կյանքը առօրյայում.(1) ամուսիններ – կանայք, 5:22-31, (2) ծնողներ – զավակներ, 6:1-4 և (3) տերեր – ծառաներ, 6:5-9: Այս քննարկումն այսօր մեր համար բացասական է թվում, սակայն այդ օրերում այն չափազանց դրական էր: Երեք խմբերը, որոնք ունեին լիարժեք մշակութային իշխանություն՝ հսկողություն (ամուսինները, ծնողները և ստրկատերերը) հավասարապես հորդորվում են չիշտ ինչպես այն մարդիկ, որոնք չունեին քաղաքացիական իշխանություն կան իրավունքներ (կանայք, երեխաները և ստրուկները): Այս անձնուրաց լիազորությունը Անկման հակադարձման գեղեցիկ օրինակ է: Ինչպիսի՛ փոփոխություն է բերում Քրիստոսը: Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Հնազանդություն (*hupotassō*)</u>, Եփես.5:21-ում:

3:18-19 Այս համատեքստում և դրա զուգահեռներում, ամուսնացած զույգերի միջև հնազանդության մասին է, ոչ թե ընդհանրապես տղամարդկանց ու կանանց: Տղամարդու գլուխ լինելու սկզբունքը սահմանվում է ամբողջ Աստվածաշնչով՝ Ծննդոց 3-ից սկսած: Սակայն Քրիստոնյա տղամարդու

գլխավորությունը բնորոշվում է և պատվիրված է լինելու զոհաբերող, անձնուրաց, Քրիստոսի սիրուն ընդօրինակող (տես՝ Եփես. 5:25, 28-29): ՆԿ-ում գլուխ լինելը ծառայություն է՝ (տես՝ Մատթ. 20:25-27, 23:11) Քրիստոսին որպես օրինակ ունենալով:

Մեր օրերում «հնազանդությունը» բացասական, սեռերի մեջ խտրականություն դնող տերմին է: Սկզբնապես այն եղել է ռազմական տերմին, որը վերաբերում էր հնազանդությանը՝ հրամանի շղթայի հիման վրա: Սակայն ՆԿ-ում այն հաճախ կիրառվում է Հիսուսի կողմից Իր երկրավոր ծնողների (տես՝ Ղուկ. 2:51) և Երկնավոր Հոր հանդեպ ցուցաբերած հնազանդության համար (տես՝ 1 Կորնթ. 15:28): Պողոսը սիրում էր այս տերմինը և կիրառել է 23 անգամ: Եփեսացիների 5:21-ը ցույց է տալիս, որ այն իրենից ներկայացնում է տիեզերական հոգևոր սկզբունք, որը կապ ունի Հոգով լեցուն կյանքի հետ: Հնազանդությունը գնում է հակառակ մեր մշակութային, արևմտյան, անհատին մեծարող մտայնությանը: Եսասիրությունը այնքա՛ն արմատացած է (տես՝ Հռոմ. 12:10, Գաղ. 5:13, Փիլ. 2:3, 1 Հովհ. 4:11): Տե՛ս Հատուկ Թեմա. Հնազանդություն, Եփես. 5:21-ում:

❖ **«ինչպես վայել է Տիրոջով»** Եփեսացիներում գտնվող զուգահեռ համարում ասվում է «Տիրոջով»: TEV-ն այս արտահայտությունը թարգմանում է որպես «քանի որ սա այն է, ինչ պետք է անեք որպես Քրիստոնյաներ» (տես՝ Կող. 3:20): Հավատացյալները ուրիշների հետ պետք է սիրով, հնազանդությամբ վարվեն, ոչ թե նրա համար, որ ուրիշներն արժանի են դրան, այլ քանի որ Քրիստոնյաներ են (տես՝ Կող. 3:23-25): Հոգին թույլ է տալիս մեղավոր մարդկությանը վերաուղղորդել իր եսակենտրոն ապրելաոճը դեպի ուրիշների վրա կենտրոնանալուն, ինչպես Հիսուսն էր ապրում (տես՝ 2 Կորնթ. 5:14-15, 1 Հովհ. 3:16):

3:19

NASB	**«և նրանց նկատմամբ դառնացած մի՛ եղեք»**
NKJV	**«և նրանց հանդեպ դառը մի՛ եղեք»**
NRSV	**«և երբեք կոպիտ մի՛ վարվեք նրանց հետ»**
TEV	**«և կոպիտ մի՛ եղեք նրանց հետ»**
NJB	**«և կոշտ մի՛ եղեք նրանց հետ»**

Սա ներկա չեզոք հրամայական է՝ ժխտական դերբայով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողությունը, որը ընթացքի մեջ է: «Դուք, ինքներդ, դադարե՛ք դառը լինելուց»: Եփեսացիների 5-րդ գլխում այս արտահայտության ստույգ զուգահեռ խոսքը չկա, սակայն Կող. 3:28-29-ը արտահայտում է միևնույն ճշմարտությունը՝ դրական իմաստով: Աստվածաշնչյան «մեկ մարմնի» համատեքստում (տես՝ Ծննդոց 2) ամուսնությունները, որտեղ ամուսինները իրենց կանանց հետ սիրալիր են վարվում, նրանք օրհնում են իրենց և հակառակը: Սիրել կողակցին, ինչ-որ առումով նշանակում է սիրել ինքն իրեն: Քրիստոնեական տան մեջ մեր սերը ընտանիքի հանդեպ արտացոլում է մեր սերը Աստծո հանդեպ և հզոր վկայություն է շփոթված և վիրավոր կորսված աշխարհի համար:

3:20 «Որդինե՛ր, հնազանդ եղեք» Սա ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ է՝ «շարունակե՛ք հնազանդ լինել»: Եփես. 6:1-4-ում այս լիազորությունը ավելի ընդարձակվում է կապված Ելից 20:12 և 2 Օր. 5:16-ի հետ՝ «Պատվիր քո հորն ու մորը»: Այս համատեքստում՝ «քանի որ սա հաճելի է Տիրոջը» պատվիրանը կապում է Քրիստոնյան երեխաների հետ:

Ուշադրություն դարձրե՛ք, որ երեխաներին պատվիրվում է հնազանդ լինել, սակայն կանանց՝ ենթարկվել: Երկու դեպքում էլ պատվիրանը ուղղված է Քրիստոնեական ընտանիքներին: Խնդիրներից մեկն այն է, որ դժվար է հաշտվել այս և մեր օրերի երեխաների հարցում, դա տարիքն է՝ «Քանի՞ տարեկան են երեխաները»: Հրեական մշակույթի մեջ տղան պատասխանատու է դառնում Օրենքի առաջ և պիտանի ամուսնության համար տասներեք տարեկան հասակում, իսկ աղջիկը՝ տասներկու: Հռոմեական մշակույթի մեջ տղան տղամարդ է դառնում տասնչորս տարեկանում, իսկ հունական մշակույթի մեջ՝ տասնութ:

3:21 «Հայրե՛ր, մի գրգռեք ձեր զավակներին» Սա ներկա ներգործական հրամայական է՝ ժխտական դերբայով, որը նշանակում է գործողությունը ընթացքի մեջ դադարեցնել՝ «դադարե՛ք գրգռել ձեր զավակներին»: Փոխադարձ պատասխանատվությունը հստակ է (տես՝ Եփես. 6:4):

Միշտ էլ եղել է սեր դավանելու արգելքը: Քրիստոնյաները (թե՛ ծնողները և թե՛ երեխաները) պետք է իրենց փոխհարաբերություններում տարբերվեն ուրիշներից՝ Քրիստոսին իրենց նվիրման պատճառով: Պողոսի կողմից ընտանիքում ճիշտ փոխհարաբերությունների վերաբերյալ քննարկումը արմատապես տարբերվում էին իր օրերի մշակութային նորմերից: Պողոսը անմիջապես դիմում էր մշակութային իշխանություն և լիազորություն ունեցող մարդկանց (ամուսիններին, ծնողներին, ստրկատերերին) և հորդորում էր նրանց իրենց ենթակայության ներքո գտնվող մարդկանց հետ (կանանց, երեխաների, ծառաների) վարվել Քրիստոնեական սիրով և արժանապատվությամբ (ճիշտ ինչպես Փիլիմոնին): Հավատացյալները Աստծո սպասավորներն են և ոչ թե տերեր: Այն, թե ինչպես ենք իրար հետ վարվում նպատակ ունի կորած՝ մեղավոր աշխարհին ցույց տալու նոր սերնդին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3:22-4:1

22Ծառանե՛ր, ամեն բանի մեջ հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ոչ թե առերես ծառայելով՝ մարդահաճոների պես, այլ՝ սրտի անկեղծությամբ և Աստծուց վախենալով: 23Եվ ինչ որ անեք, սրտա՛նց արեք, որպես թե Տիրոջ համար և ոչ թե՝ մարդկանց. 24իմանալով, որ ժառանգության հատուցումը Տիրոջից եք ստանալու, որովհետև Տեր Քրիստոսին եք ծառայում, 25և ով սխալ է գործում, իր սխալի հատուցումը պիտի ստանա. աչառություն չկա: 4:1Տերե՛ր, արդարությամբ ու հավասարությամբ վարվեցեք ձեր ծառաների հետ՝ իմանալով, որ դուք էլ Տեր ունեք երկնքում:

3:22 «Ծառանե՛ր, ամեն բանի մեջ հնազանդ եղեք» Պետք է որ նոր պարբերություն չլիներ Կող. 3:22-ում: Սա ներկա ներգործական հրամայական է՝ «շարունակեք հնազանդվել»: Սա Քրիստոնեական ընտանիքից երրորդ օրինակն է (տես՝ Եփես. 6:5-9): Մեր օրերում սա կարող է վերաբերել Քրիստոնյա գործատուներին և գործավորներին: Եփեսացիներում, և հավանաբար այստեղ՝ Կողոսացիներում նույնպես, այն վերաբերում է թե՛ փրկված և թե՛ կորուսյալ տերերին:

Անձամբ ես չեմ հավատում այս «ամեն բանի մեջ» խոսքը վերաբերում է չարին կամ մեղքին (տես՝ Գործք 5:29): Սա ընդհանուր հայտարարություն է, որով հորդորում է հնազանդություն, ոչ թե հավատացյալների համար ամեն ինչում՝ նույնիսկ այն բաներում, որոնք արգելված են Սուրբ Գրքով, մասնակից լինելու թույլտվություն: Նույնը վերաբերում է նաև կանանց (տես՝ Կող. 3:18, Եփես. 5:22): Տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի հորդորները ստրուկներին, Եփես. 6:5-ում:

❖ **«սրտի անկեղծությամբ»** Տե՛ս ստորև ներկայացված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՌԱՏԱՁԵՌՆ, ԱՆԿԵՂԾ (*haplotēs*)
SPECIAL TOPIC: GENEROUS/SINCERE (*haplotēs*)

Այս տերմինը (*haplotēs*) ունի երկու նշանակություն՝ «առատաձեռն» կամ «անկեղծ»: Այն տեսողության հետ կապված փոխաբերություն էր: ՀԿ-ում աչքը երկու կերպով օգտագործվում է որպես շարժառիթի համար փոխաբերություն:

1. չար աչք (ժլատ, տես՝ 2 Օրինաց 15:9 և Առակ. 23:6, 28:22)
2. բարի աչք (առատաձեռն, տես՝ Առակ. 22:9)

Հիսուսը հետևեց այս կիրառությանը (տես՝ Մատթ. 6:22-23, 20:15):

Պողոսն այս տերմինը երկու իմաստով է գործածում՝

1. «պարզություն, անկեղծություն, մաքրություն» (տես՝ 2 Կորնթ. 1:12, 11:3, Եփես. 6:5, Կող. 3:22):
2. «առատաձեռնություն, ազատականություն» (տես՝ Հռոմ. 12:8, 2 Կորնթ. 8:2, 9:11,13):

3:23 Տիրոջը ծառայելը բոլոր Քրիստոնյաների համար շարժառիթ է իրենց բոլոր գործունեությունների մեջ (տես՝ Կող. 3:17, Եփես. 6:7, 1 Կորնթ. 10:31): Հավատացյալները պետք է ամեն օրվա կտրվածքով լինեն Աստծո փրկարար զորության կենդանի վկաները:

3:24 Հին աշխարհում ստրուկները չունեին ժառանգության իրավունքներ: Սակայն այժմ՝ Քրիստոսով, նրանք ունեն: Աստված վարձատրելու է բոլոր նրանց, ովքեր սիրում, երկրպագում և ծառայում են Իրեն:

3:25 Աստվածային դատաստանը գործում է առանց խտրականության (տես՝ 2 Օր. 10:17, Գործք 10:34, Հռոմ. 2:11, Եփես. 2:9, 6:9, 1 Պետ. 1:17): Այս սկզբունքը հստակ արտահայտվում է Գաղ. 6:7-ում: Նույնիսկ հավատացյալներն են հաշիվ տալու Աստծուն, ոչ թե մեղքի համար, այլ ծառայության (տես՝ 2 Կորնթ. 5:10): Մեղքն ունի իր հետևանքները ժամանակի և հավիտենության մեջ:

4:1 Սա ցույց է տալիս փոխադարձ պատասխանատվություն (տես՝ Կող. 3:19, 21): Այս համարը ի տարբերություն Եփեսացիներում առկա համարի, ուղղված է Քրիստոնյա ստրկատերերին (տես՝ Փիլիմոն): NIV Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 1817) ավելացնում է մի հետաքրքիր մեկնաբանություն՝ «Պատճառը, որ Պողոսն ավելի շատ է անդրադառնում ստրուկներին և տերերին, քան կանանց, ամուսիններին, որդիներին և հայրերին, հնարավոր է այն էր, որ Օնեսիմոս (տես՝ Կող. 4:9) անունով ստրուկը գնալու էր Տյուքիկոսի հետ, որպեսզի այս նամակները հասցնեին Կողոսացիներին, Փիլիմոնին՝ Օնեսիմոսի տիրոջը, որը նույնպես ապրում էր Կողոսիայում»:

Այս համարն ըստ համատեքստի պետք է որ լիներ 3-րդ գլխում: Այն եզրափակում է Պողոսի կողմից ներկայացրած Քրիստոսի պես ընտանեկան միջավայրում ապրելու օրինակների ցանկը: Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Պողոսի հորդորները ստրուկներին</u>, Եփես. 6:5-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա <u>ուղղեցույց</u> հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս ենք մենք մահացել Քրիստոսի հետ: Ի՞նչ նշանակություն ունի դա մեր ամենօրյա կյանքի համար:
2. Ինչո՞ւ են համար 11 և 17 այդքան կարևոր Քրիստոնական հավատքի համար:
3. Սահմանե՛ք «հնազանդություն» բառը: Արդյո՞ք սա արտահայտում է թերարժեքություն: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:
4. Ինչո՞ւ է Քրիստոնեական ընտանիքը կիրառվում որպես փոխադարձ հնազանդության օրինակ: